2003, ԴԵԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 23 (163)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Ուխտի պատարագ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում



Նոյեմբերի 30-ին Մայր տաճարի օծման 1700-ամյա հոբելյանական արարողությունների շրջանակում Մայր Աթոռ Սբ. Էջմիածինն ընդունեց Գեղարքունիքի թեմի ուխտավորներին՝ առաջնորդությամբ թեմի առաջնորդական տեղապահ Տ. Դերենիկ վրդ. Դավթյանի:

***«Սիրելի՛ ուխտավորներ, Գեղամա աշխարհից այսօր հավաքվել ենք այստեղ մեկ անգամ եւս խոնարհվելու Իջման Սուրբ Սեղանի առջեւ: ...Այսօր էլ մեր հույսն ու ապավենը մեր հավատքն է, այդ աներեր հավատքի տունը՝ հայոց սրբություն սրբոց Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը: 17 դար շարունակ տարբեր փորձությունների միջով է անցել Սբ. Էջմիածինը, բայց կարողացել է պահպանել իր ինքնությունը, հավատքը, ավանդույթներն ու վերջապես իր խոստովանությունը հանդեպ Հիսուս Քրիստոսի»,*** - նշեց հայր սուրբն իր քարոզում:

Սբ. Պատարագին մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ:

Ուխտավորների թվում էին Գեղարքունիքի մարզպետը, մարզային իշխանությունների այլ ներկայացուցիչներ:

### Աղքատության հաղթահարմանը նվիրված խորհրդակցություն՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում

Նոյեմբերի 29-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում տեղի ունեցավ մեկօրյա հավաք-խորհրդակցություն՝ «Եկեղեցու դերը աղքատության հաղթահարման գործընթացում» թեմայով: Հավաքի կազմակերպիչն էր Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան կլոր սեղանը:

Հավաքի մասնակիցներին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը:

Հայաստանում աղքատության հաղթահարման խնդիրների եւ այս հարցում եկեղեցու ունեցած դերի մասին զեկույցներով հանդես եկան ԵՀԽ հայաստանյան կլոր սեղանի խորհրդի անդամ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Կաթոլիկ օգնության ծառայության Կովկասի տարածաշրջանի ներկայացուցիչ Ռիչարդ Հոֆմանը, «Հայաստանյան էկումենիկ եկեղեցական փոխատվական ֆոնդ» հիմնադրամի տնօրեն-կառավարիչ Տիգրան Հովհաննիսյանը, այս խնդիրներով զբաղվող պետական այրեր եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

### Վեհափառ Հայրապետն ընդունեց Համաշխարհային բանկի գործադիր տնօրենների խորհրդի անդամներին

Դեկտեմբերի 10-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում գտնվող Համաշխարհային բանկի գործադիր տնօրենների խորհրդի անդամներին, որ ներկայացնում են Հոլանդիան, Սաուդյան Արաբիան, Արգենտինան, Կանադան, Շվեյցարիան, Ֆինլանդիան եւ Պակիստանը:

Նորին Սրբությունը, ողջունելով նրանց այցը Մայր Աթոռ, բարձր գնահատեց Համաշխարհային բանկի ծառայությունը հասարակական, սոցիալական ոլորտներում՝ մասնավորապես ընդգծելով ժողովրդի կյանքի բարելավման, երկրների տնտեսական զարգացման, աղքատության հաղթահարման ու խաղաղության հաստատման համար գործադրվող ջանքերը: Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց նաեւ ՀԲ կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի համար:

Հանդիպման ընթացքում զրուցակիցներն անդրադարձան եկեղեցի-պետություն հարաբերություններին, խոսվեց աղքատության նվազեցման նպատակով եկեղեցու կողմից իրականացվող ծրագրերի մասին:

### Սուդանում աշխատող օդաչուներն իրենց երախտիքը հայտնեցին Վեհափառ Հայրապետին

Դեկտեմբերի 11-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սուդանում աշխատող Հայաստանի քաղաքացիական ավիացիայի մի խումբ օդաչուների: Նրանք Մայր Աթոռ էին եկել իրենց երախտիքը հայտնելու Վեհափառ Հայրապետին՝ Մայր եկեղեցու այն աջակցության համար, որ ցուցաբերվեց նոյեմբերի 17-ին Սուդանում ավիավթարից զոհված իրենց գործընկերների հուղարկավորության կազմակերպման գործում: Օդաչուներն իրենց մասնավոր երախտիքը հայտնեցին Սուդանի հոգեւոր հովիվ Տ. Մյուռոն քհն. Սարգսյանին, որն անձամբ էր մեկնել դեպքի վայր եւ ապահովել դիակների տեղափոխումը Հայաստան: Դիակների տեղափոխման օրը Խարթումի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում կատարվել էր նաեւ հոգեհանգստյան արարողություն:

Վեհափառ Հայրապետն իր վշտակցությունը հայտնեց օդաչուներին՝ զոհված ընկերների համար՝ հայցելով Սուրբ Հոգու շնորհով Տիրոջ մխիթարությունը զոհվածների հարազատներին ու մտերիմներին:

### Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Տավուշի մարզի Ոսկեվան գյուղի Ս. Գայանե եկեղեցին

Դեկտեմբերի 4-ին, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Գուգարաց թեմում օծվեց Տավուշի մարզի Ոսկեվան գյուղի Ս. Գայանե եկեղեցին: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանը եւ Մայր Աթոռի միաբաններ:

Տասնյակ տարիներ հնամենի այս եկեղեցին փակ էր հավատացյալների առջեւ: Եկեղեցին վերականգնվեց մոսկվաբնակ գործարար Արթուր Բաղրյանի ջանքերով:

Շնորհավորելով ներկաներին եկեղեցու օծման առիթով՝ Նորին Սրբությունը մասնավորապես նշեց. «Բազում տարիներ այս եկեղեցին լռել էր, աղոթք եւ շարական չէր հնչում նրա կամարների ներքո, հավատացյալն այստեղ երկրպագություն չէր առնում Ավագ Ս. Խորանից, իսկ Աստված, անհավատների մտածումով, թվում էր, թե դուրս է բերվել մեր կյանքից, եւ մեր ժողովուրդը խարխափում էր անհավատության մեջ: Բայց այսօր, հուրախություն մեզ ամենքիս, բարին մուտք է գործում Ձեր կյանքից ներս, Աստված կրկին խոսելու է Ձեզ հետ Իր կենարար պատվիրաններով ու պատգամներով, որպեսզի Ձեր կյանքը դառնա օրհնյալ եւ աստվածահաճո. որպեսզի չարը դուրս մղվի Ձեր հոգիներից ու սրտերից. եւ սերը, եղբայրասիրությունը, կամեցողությունը, ողորմածությունը վերստին Ձեր կյանքի ուղեկիցը լինեն.... Մեր ազգի փրկության ճանապարհը 1700 տարիներ շարունակ եղել եւ մնում է Աստծո ճանապարհը, որ անցնում է եկեղեցու միջով»:

Գարեգին Բ Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց նաեւ տեր եւ տիկին Արթուր եւ Գայանե Բաղրյաններին՝ պարգեւատրելով նրանց Հայ եկեղեցու «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանով:

Սրբազան արարողությանը ներկա էին Տավուշի մարզպետը, բազմաթիվ հավատացյալներ:

### Հոգեհանգիստ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Դեկտեմբերի 7-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սբ. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միջեկեղեցական բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Հավարտ Սբ. Պատարագի տեղի ունեցավ հոգեհանգստի արարողություն 1988թ. երկրաշարժի զոհերի, ինչպես նաեւ նորոգ հանգուցյալներ Տ. Սահակ արք. Այվազյանի եւ Տ. Մեսրոպ արք. Աշճյանի հոգիների հանգստության համար:

«Այսօր դեկտեմբերի 7-ն է... Մեր հայացքի առջեւ վերապատկերվում են ահավոր տեսարանները ողբերգական այդ օրվա, եւ մեր հոգին վերապրում է տրտմությունն ու ցավը: Սակայն մեր այդ տխրությանը, մեր վշտին ավելանում է մի նոր ցավ: Անցած շաբաթ մեր եկեղեցին երկու հավասարիմ եւ արժանավոր հոգեւորականների կորցրեց՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության երկու միաբանների՝ Սահակ արք. Այվազյանին եւ Մեսրոպ արք. Աշճյանին:

Վերջին տարիներին մենք ավելի մոտիկից ճանաչելու հնարավորություն ենք ունեցել Մեսրոպ Սրբազանին: Նա երջանկահիշատակ մեր նախորդի կողմից հրավիրվեց Մայր Աթոռ՝ իր օգտակարությունը եւ ծառայությունը բերելու Սբ. Էջմիածնին: Սրբազանը ուրախությամբ բազում գործ կատարեց գրքի արժանի բազում գործերի ընթացքում հասցրեց գրո արժանի բազում գործեր, աշխատանքներ իրականացնել ու իրագործել: Անհանգիստ էր, աշխատանքներ իրականացնել ու իրագործել: Անհանգիստ էր ծեր, աշխատանքներ իրականացնել ու իրագործել: Անհանգիստ էր իր բնավորությամբ, ստեղծագործելու իր տարերքի մեջ, փնտրում էր իր ժողովրդին, որը պետք է զորացնի նորը, որը պետք է ուրախացներ ժողովրդին, որը պետք է զորացներ նոր, որը պետք է ուրախացներ մեր հայրենիքն ու եկեղեցին»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

# Վախճանվեց Գերշ. Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը



Դեկտեմբերի 2-ին՝ երեկոյան ժամը 8-ին, Ամերիկայի Միացյալ Նահանգներում անակնկալ, սրտի կաթվածից վախճանվեց Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը:

Հանգուցյալ Սրբազանը, լինելով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միաբան, վերջին տարիներին բնակություն էր հաստատել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ իր ծառայությունն էր բերում Ամենայն Հայոց Կաթողիկոսությանը եւ հայրենիքին:

Մայր Աթոռում մշտապես բարձր է գնահատվել Սրբազան Հոր հոգեւոր, մշակութային, հասարակական գործունեությունը, Հայաստանում քրիստոնեությունը իբրեւ պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների կազմակերպման գործում նրա մեծագույն ավանդը, ինչպես նաեւ հայագիտական եւ գրական բազմավաստակ ծառայությունը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, պաշտոնեությունը եւ հավատացյալ դասը խորապես սգում են Սրբազան Հոր անժամանակ մահը եւ աղոթում հանգուցյալի հոգու հանգստության համար:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հանուն Ամենայն Հայոց Հայրապետության հոգեւոր դասի եւ պաշտոնեության, ցավակցություններ է հայտնել Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին:

Սրբազան Հոր հուղարկավորությունն իր կամքի համաձայն կատարվել է Անթիլիասում՝ դեկտեմբերի 8-ին:

Դեկտեմբերի 7-ին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում, հավարտ Սբ. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Սրբազան Հոր հոգու հանգստության համար:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

▼▼▼

**Մեսրոպ արք. Աշճյանը (ավազանի անունով՝ Հրայր) ծնվել է 1941 թ. հունվարի 3-ին Բեյրութում:**

**Նախնական կրթությունը ստացել է Բեյրութի Սբ. Նշան ազգային վարժարանում:**

**1957-1961 թթ.** սովորել է Անթիլիասի դպրեվանքում:

**1961 թ.** ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

**1962-1963 թթ.** Շվեյցարիայում, ապա՝ ԱՄՆ-ում հետեւել է առանձին դասընթացների:

**1963 թ.** ստացել է վարդապետական աստիճան:

**1964-1970 թթ.** Անթիլիասում եւ Հալեպում կատարել է ուսուցչական եւ դասախոսական աշխատանքներ, եղել «Հասկ»-ի խմբագիր:

**1970 թ.** մեկնել է ԱՄՆ եւ Նյու Ջըրսիի Փրինստոնի աստվածաբանական համալսարանում ուսանել աստվածաբանություն, եկեղեցական պատմություն, ծիսագիտություն, ստացել մագիստրոսի աստիճան՝ Ներսես Լամբրոնացու «Հոռմկլայի ճառ»-ի մասին գրած ուսումնասիրության եւ թարգմանության համար, ստացել նաեւ մագիստրոսի երկրորդ աստիճան:

**1973-1977 թթ.** Իրանում (Սպահան, Նոր Ջուղա) վարել է առաջնորդի պաշտոն:

**1977 թ.** ընտրվել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Հյուսիսային Ամերիկայի Արեւելյան շրջանի եւ Կանադայի թեմի առաջնորդ:

**1976 թ.** ստացել է ծայրագույն վարդապետական աստիճան:

**1977 թ.** ձեռնադրվել է եպիսկոպոս՝ ձեռամբ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Աթոռակից Կաթողիկոսի:

**1983 թ.** արժանացել է արքության պատվի:

**1993 թ.** Երեւանում հիմնել է «Ներսես Մեծ» բարեգործական հիմնադրամը:

**1996-2000 թթ.** Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում վարել է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի գրասենյակի վարիչ-տնօրենի պաշտոնը:

**2001 թ.** Երեւանում հիմնել է «Մուղնի» հրատարակչությունը:

**Տ. Մեսրոպ արք. Աշճյանը բազմաթիվ գրքերի հեղինակ է: Նրան շնորհվել է ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչում:**

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# Մեսրոպ արք. Աշճյանի հիշատակին

*«Գրեա. երանի մեռելոցն, որք ի Տէր ննջեցին այժմիկ վաղվաղակի.զայս ասէ Հոգին, քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց. բայց միայն գործք իւրեանց չոգան զհետ նոցա»:*

(Յայտն. ԺԴ 13)



Ի Տեր հանգյավ բոլորիս կողմից սիրված մի հոգեւորական, ով իր կյանքով սովորեցրեց մեզ գնահատել տրված ամեն մի պահ, վայրկյան:

Հաճախ մենք հակված ենք լինում այնպիսի գործեր անելու, որոնք առաջին փորձությանն իսկ չեն դիմանում. այրվում են: Յուրաքանչյուրի գործը կրակով է փորձվելու, ինչպես պատգամում է Պողոս առաքյալը. այն ամենը, որ խոտ է, փայտ, այրվելու ու ոչնչանալու ենթակա է. մնալու են միայն ոսկին, արծաթը, պատվական քարերը...

Սրանք են հետեւելու մարդուն, այդ գործերն են մնալու, եւ դրանք տեսնելով են «մարդիկ փառավորելու ձեր Հորը, որ երկնքում է»: Որքա՜ն պարզ է տերունական պատգամը եւ որքա՜ն հասկանալի, ու թվում է, թե նաեւ՝ իրագործելի:

Այդ պատգամն էր հենց սովորեցնում մեզ երջանկահիշատակ Սրբազանը: Վկա՝ այն ամենը, ինչ նա թողեց հայաստանաբնակներիս մեջ այս մեկ տասնամյակի ընթացքում:

Այն ամենը, ինչ պահում ենք մեզ, վաղ թե ուշ կորցնելու ենք, կորցնելու ենք հավիտյան: Ինչպես տերունական հայտնի առակում, երբ մեկ քանքար ստացողը, այն փաթաթելով, ծածկեց թաշկինակով ու նույնությամբ վերադարձրեց իր տիրոջը, երբ վերջինս եկավ ու հաշիվ պահանջեց հանձնված քանքարների համար: Ինչ որ տալիս ենք ուրիշներին՝ կարիքավորներին, հիվանդներին, բանտարկյալներին, անօգնականներին, որբերին, հենց այդ է մնալու եւ հենց այդ է հետեւելու մարդուն: Հենց այդ չափով է վարձատրելու մեզ մեր Երկնավոր Հայրը:

Երջանկահիշատակ Սրբազանը լավագույն օրինակը հանդիսացավ մեզ համար. բազում մարդկանց սրտեր մոտեցրեց Ավետարանին ու եկեղեցուն, բազում մանուկների՝ եկեղեցու Սբ. Ավազանում մկրտելու առիթ հանդիսանալով՝ Հայ եկեղեցուն անդամագրեց...

Հիրավի, մեր Տերը նրան շնորհել էր անհուն եռանդ ու նվիրում՝ իր աստվածահաճո գործերը կատարելու համար:

Մեծ է մեր վիշտը, քանի որ մեծ է կորուստը... Վստահ ենք, որ այդ նույն եռանդով հիմա էլ նա, անցնելով հաղթանակած եկեղեցու զինվորների շարքերը, շարունակելու է իր բարեխոսական աղոթքները մեզանից ամեն մեկի համար, մեր Սուրբ եկեղեցու համար, մեր ժողովրդի համար:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. ամէն:

*ՔԴԿ-ի եւ «Քրիստոնյա Հայաստան» թերթի աշխատակազմ*

## ԾԵՆՆՈՒԴԱ Գ

# ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐԻՆ

*Սկիզբը՝ թիվ 19-22*

**ՀԱՐՑ 9: Ավելի լավ չէ՞ր լինի, եթե ասեինք, որ մկրտությունը Քրիստոսի հետ հարություն առնել է նշանակում եւ ոչ թե Նրա հետ մեռնել, որովհետեւ մահը վնասակար է, անօգտաբեր, մինչ հարությունն օգտաբեր է:**

Մկրտությունը Քրիստոսի հետ մեռնել եւ Նրա հետ հարություն առնել է, ինչպես առաքյալը բացատրում է հռոմեացիներին ուղղած իր թղթում. ***«Եթե տնկվեցինք միասին Նրա մահվան նմանությամբ, նաեւ Նրա հարության [նմանությամբ կլինենք]»*** (Հռոմ. Զ 5) եւ՝ ***«Եթե մեռանք Քրիստոսի հետ, հավատում ենք, որ նաեւ կապրենք Նրա հետ»*** (Հռոմ. Զ 8):

Այս հարցում ոչ որ չպետք է հիմնվի սեփական դատողությունների վրա եւ շեղվի եկեղեցու վարդապետությունից՝ ասելով, որ մահն անարժեք է, իսկ հարությունը՝ օգտաբեր: Սուրբ Գիրքն ասում է. ***«Կամ չգիտե՞ք, որ երբ մկրտվեցինք Քրիստոս Հիսուսով, Նրա մահվամբ մկրտվեցինք: Մկրտությամբ թաղվեցինք Նրա հետ մահվան մեջ, որպեսզի ինչպես Քրիստոսը հարություն առավ մեռելների միջից Հոր փառքով, մենք նույնպես քայլենք կյանքի նորոգությամբ»*** (Հռոմ. Զ 3, 4): Առաքյալը սա կրկնում է կողոսացիներին ուղղած իր թղթում՝ ասելով. ***«.... թաղվելով Նրա հետ մկրտության մեջ, որով Նրա հետ հարություն առաք հավատով, Աստծո ներգործությամբ, Ով հարություն տվեց Նրան մեռելների միջից»*** (Կող. Բ 12): Այս համարներից մենք տեսնում ենք, որ մկրտությունը միաժամանակ եւ մահ է, եւ հարություն: Հիրավի՛, ովքեր արհամարհում են Քրիստոսի հետ մեռնելը, չեն կարող ընդունել Նրա հարության օրհնությունը:

Այստեղ կարելի է հարցնել. ինչո՞ւ մկրտության մեջ մահ կա, եւ ո՞րն է դրա կարեւորությունը:

ա) Սրա նպատակը Տեր Հիսուս Քրիստոսի հետ հաղորդակից լինելն է: Առաքյալը չասաց, թե ինքը միայն Նրա հարության զորության մեջ է մտնում, այլ՝ ***«.... ճանաչելու Նրան եւ Նրա հարության զորությունը, Նրա չարչարանքներին հաղորդությունը՝ կերպարանակից լինելու Նրա մահվանը»*** (Փիլ. Գ 10), եւ՝ «Եվ Քրիստոսի հետ խաչը ելնեմ» (գրքի բնագրում՝ ըստ հունարեն հայտնի բնագրերի՝ «խաչվեցի») (Գաղ. Բ 20): Եվ «Քրիստոսի հետ մեռնել» արտահայտությունը հաճախ կրկնվում է Հռոմ. Զ գլխում:

բ) Մարդու ապականված հին բնությունը պետք է մկրտության մեջ մեռնի, որպեսզի մարդը կարողանա նոր բնություն ստանալ: Ահա այս միտքն է առաքյալն արտահայտում, երբ խոսում է մկրտության մեջ հին մարդուն խաչելու մասին. հռոմեացիներին ուղղված թղթի Զ գլխում նա ասում է. ***«Սա՛ իմացեք, որ մեր հին մարդը Նրան խաչակից եղավ, որպեսզի մեղքի մարմինը խափանվի եւ այլեւս չծառայենք մեղքին: Որովհետեւ մեռնողն արդարացած է մեղքից»*** (Հռոմ. Զ 6-7): Ահա այստե՛ղ է մահվան օգուտը: Մահը, ինչպես ոմանք կարծում են, վնասակար չէ: Մեզ եւ մեր հին մարդու համար լավ է մեռնել, որպեսզի կարողանանք հարություն առնել նոր բնությամբ՝ ըստ Աստծո պատկերի: Իսկ ապականված բնությունը չունի Քրիստոսի հետ հարություն առնելու զորություն: Մեր հին մարդու համար էական է մեռնելը, որպեսզի կարողանանք ապրել:



գ) Նրա մահվանը հաղորդակից լինելը նշանակում է, որ մենք խոստովանում ենք, որ ընկած էինք մահվան դատավճռի տակ, այսինքն՝ մեռած էինք մեր մեղքերում: Քրիստոսը մեռավ մեզ համար եւ թաղվեց: Ահա թե ինչու ենք մենք մկրտվում Նրա մահվան մեջ: Քանի դեռ մեր մեղքերի վարձը մահն է, մենք մկրտության մեջ Քրիստոսի հետ թաղվելու կարիքն ունենք: Այսպես մենք ընդունում ենք Քրիստոսի հետ հարություն առնելու օրհնության պարգեւը:

դ) «Հարություն» բառի սովորական իմաստը մեռելների միջից հարություն առնելն է: Ով մկրտության մեջ հարություն է առնում Քրիստոսի հետ, նախ պետք է Նրա հետ մեռած լինի, որ կարողանա հարություն առնել: Եթե չի մեռել, ինչպե՞ս պիտի հարություն առնի:

**ՀԱՐՑ 10: Ինչո՞ւ այն անձը, ում ծնողները մկրտված եւ ադամական մեղքից ազատված են, պետք է նույնպես մկրտվի:**

Մենք մահվան դատավճիռը մեր անմիջական ծնողներից չենք ստացել, որպեսզի նրանց մկրտությամբ փրկվենք, այլ ստացել ենք ուղղակիորեն Ադամից եւ Եվայից՝ առաջին մարդկանցից: Մենք Ադամի երանքում էինք (երանք նշանակում է զոստկատեղի հատվածը, երիկամունք: Սա մարմնի այն մասն է, ուր պտղաբերության՝ որդեծնության զորությունն է գտնվում). երբ Ադամի բնությունը մեղանչեց եւ նա մահվան դատապարտվեց, նրա երանքում ամեն ինչ մահկանացու դարձավ: Մենք դուրս ենք եկել Ադամի երանքից մահվան դատապարտությամբ: Ուստի մահվան պատիժը Ադամից փոխանցվեց նաեւ նրա բոլո՛ր սերունդներին եւ ո՛չ թե միայն Կայենին, Աբելին ու Սեթին: Այս մասին Սուրբ Գիրքն ասում է. ***«Ինչպես մեկ մարդով մեղքն աշխարհ մտավ, եւ մեղքով՝ մահը, այդպես մահը տարածվեց բոլոր մարդկանց վրա, որովհետեւ բոլորը մեղանչեցին»*** (Հռոմ. Ե 12), նաեւ՝ «Ինչպես Ադամով ամենքը մեռնում են, այդպես էլ Քրիստոսով ամենքը կկենդանանան» (Ա Կոր. ԺԵ 22): Ուստի մահը դատապարտություն է մարդկային ամբողջ ցեղի համար: Ամեն ծնվող մարդկային էակ մահվան է դատապարտված, որովհետեւ նա Ադամի երանքում էր, երբ Ադամը դատապարտվեց:

Մահվանից փրկությունն անհատական փրկություն է եւ կախում չունի ծնողների մկրտված կամ չմկրտված լինելուց: Այս փրկությունը կարիքն ունի ապաշխարության եւ հավատի՝ մկրտության ու Քրիստոսի արյան, ինչպես նաեւ շնորհառիթ բոլոր միջոցների հանդեպ (Այսինքն՝ այն միջոցների, որոնցով աստվածային շնորհն է տրվում կամ գործում): Չկան մեղք չունեցող ծնողներ: Սաղմոսերգուն ասում է. «Անօրենության մեջ հղացավ եւ մեղքի մեջ ծնեց ինձ իմ մայրը» (Սաղ. Ծ 5):

Մենք ծնվելու ենք մեղքի մեջ այնքան ժամանակ, քանի դեռ չենք ազատվել ապականության ծառայությունից (Հռոմ. Ը 21): Իսկ ե՞րբ ենք ազատվելու այս ապականությունից: Առաքյալը մեր մարմնի մասին ասում է. ***«Այսպես է նաեւ մեռելների հարությունը. [մարմինը] սերմանվում է ապականությամբ եւ հարություն առնում առանց ապականության.... Քանզի այս ապականությունը պետք է անապականություն հագնի եւ այս մահկանացուն՝ անմահություն»*** (Ա Կոր. ԺԵ 42, 53): Ե՞րբ տեղի կունենա սա: Երբ փողը հնչի եւ մեռելները հարություն առնեն:

Շարունակությունը՝ էջ 5

# ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

## ԵՂԻԱ Ա ԱՐՃԻՇԵՑԻ
## (703-717)

Արաբական զորավար Օկբայի կարգադրությամբ Սահակ Գ Ձորոփորեցու մարմինը Դվնում պատվով հողին հանձնելուց հետո կաթողիկոս ընտրվեց Բզնունյաց եպիսկոպոս Եղիան, որ ծնունդով Աղիովիտ գավառի Արճեշ ավանից էր: Թե որոնք էին նրա առավելությունները, որ նրան հայրապետական իշխանության բերեցին, դժվար է ասել: Առավել հավանական է այն, որ նա արաբների հետ համագործակցության կողմնակիցներից էր, որը եւ նրան հասցրել էր կաթողիկոսական աստիճանին: Աչքի է ընկել առավելապես վարչական գործունեությամբ եւ պաշտոնավարել է, պատմիչների համաձայն, 13 կամ 14 տարի: Բացահայտ սխալ պետք է համարել նրան վերագրված 3 եւ 23 տարիների կաթողիկոսական շրջանը, իսկ 13-ի եւ 14-ի շփոթը կապված է Գ եւ Դ թվականների աղավաղման հետ: Հետեւաբար Եղիան հովվապետել է 703-ից մինչեւ 717 թվականը, չնայած Ասողիկը նրա ընտրությունը դնում է 709, իսկ Սամվել Անեցին՝ 704 թվականին:

705 թվին մեռավ Աբդուլմելիք խալիֆը, որին հաջորդեց նրա որդի Վալիդը (Վլիթ), որը գահակալեց 10 տարի: 715 թվին գահն անցավ Վալիդի եղբայր Սուլեյմանին, որը շատ չանցած՝ 717 թվին մահացավ՝ գահը թողնելով իր հորեղբորորդի Օմար Բ-ին՝ Եղիա Ա Արճիշեցու ճիշտ վերջին տարում: Հայաստանն իր մեծ մասով վերածվել էր արաբական երկրամասի, իսկ բյուզանդական գահին իրար էին հաջորդում ինքնընտիր կայսրերը՝ միմյանց սպանելով: 705 թվին գահին վերականգնվեց քիթը կտրված Հուստինիանոս Բ-ն, որին աջակցեցին խազարները: Սակայն 711-ին գահին տիրացավ Փիլիպիկոս Վարդանը, 715-ին՝ Անաստաս Բ-ն, 716-ին՝ Թեոդոս Գ-ն, իսկ 717-ին՝ Լեւոն Գ Իսավրացին, որի օրոք կայսերական իշխանությունը կայունացավ:

Հայաստանի արաբական մասում ոստիկան եղավ Մուհամմեդ իբն-Օկբան, որն իր երեքամյա իշխանության շրջանում երկիրը կառավարեց խաղաղությամբ: Երբ Հուստինիանոս Բ-ն կրկին վերահաստատվեց Բյուզանդիայի գահին, փորձեց իր իշխանությունը տարածել հայկական գավառների վրա, իսկ հայերն էլ, որոնց գլուխ կանգնած էր Սմբատ Բյուրատյանը, տեսնում էին, որ Օկբա զորավարը խեթ է նայում հայ նախարարներին՝ չնայած հաշտ գործելակերպին: Ղեւոնդի խոսքերով՝ Վալիդը կարգադրում է Օկբային ոչնչացնել հայ նախարարական տոհմերը՝ իրենց հեծելազորով, իսկ հայերն էլ, Սմբատ Բյուրատյանի առաջնորդությամբ, օգնում են բյուզանդացիներին արշավանքի ժամանակ: Սակայն Դրաշպետի (Վանանդի գավառ) ճակատամարտում բյուզանդացիներն արաբներից չարաչար պարտվեցին, իսկ Սմբատ Բյուրատյանն ու նրան աջակից նախարարները, որոնց հաջողվեց փախչել Բյուզանդիա, բնակության համար ստացան Փույթ կամ Փոթի քաղաքը:



Օկբայի վերաբերմունքը հայերի նկատմամբ կտրուկ փոխվեց: Նրա հրամանով Կասմը կամ Կաշմը (իմա՛ Քասըմ), որ Նախճավանի կառավարիչն էր, հրավերներ ուղարկեց հայոց նախարարներին՝ իբրեւ թե նրանց զորամասերը արքունի բանակի մեջ ներառելու եւ ռոճիկ վճարելու համար: Շատ նախարարներ արձագանքեցին հրավերին եւ ժամանեցին Նախճավան ու Խրամ ավան, որտեղ արաբները, նենգորեն խաբելով, նրանց զինաթափեցին եւ լցնելով հիշյալ բնակավայրերի եկեղեցիները՝ կրակի տվեցին: Հայ նախարարության ծաղիկն աննկարագրելի տանջանքներով ոչնչացվեց: Մինչեւ հրկիզելն արաբները հայերին առաջարկեցին ընդունել իսլամը եւ մերժում ստանալով՝ իրագործեցին իրենց սեւ գործը: Նախճավանում այրվածների թիվը, ըստ Ստեփանոս Օրբելյանի, 800 էր, իսկ Խրամի եկեղեցում զոհվածներինը՝ երեւի դրա կեսի չափ, այնպես որ հայ նախարարությունն ավելի քան 1200 զոհ տվեց: Մ. Օրմանյանը հայ նախարարների ողջակիզումը դնում է 707 թվին, որը թերեւս ճիշտ չէ: Ավելի հավանական է կարծել, որ այդ տեղի ունեցավ Դրաշպետի հաղթանակից հետո՝ հենց նույն 705 թվականին: Եվ, իրոք, Օկբայի իշխանությունը Հայաստանում սկսվում է ոչ թե 705 թվից, այլ 703-ից, հետեւաբար խաղաղության երեք տարիներն ավարտվում են 705-ին:



Հայ նախարարների հետապնդումների նոր ալիք սկսվեց Նախճավանի եւ Խրամի եկեղեցիներում՝ նրանց նշանակալից մասի ողջակիզումից հետո: Շատ նախարարներ բանտ նետվեցին եւ ենթարկվեցին աներեւակայելի խոշտանգումների՝ անբնական ու անհնարին տուգանքներ կորզելու նպատակով: Ովքեր էլ կարողացածի չափ վճարում էին, չէին ազատվում՝ երդման համաձայն, այլ նոր պահանջների էին ենթարկվում՝ մինչեւ լրիվ սնանկանալը: Սակայն խնդիրը դրանով չէր ավարտվում, որովհետեւ դրան հետեւում էին բռնի ուրացության փորձերը եւ կախաղանը: Այսպես վարվեցին Սմբատ Աշոտյանի, Գրիգոր եւ Կորյուն Արծրունիների, Վարազշապուհ Ամատունու ու եղբոր եւ շատ այլ նախարարների հետ, որի արդյունքում, Ղեւոնդի խոսքերով, աշխարհը զրկվեց նախարարներից: Երկիրը մնաց անառաջնորդ, որից օգտվելով՝ արաբներն ուզածի պես ավերում ու ավարում էին երկիրը, գերում ու կողոպտում եւ անապատացնում այն: Շուտով թշնամին իր զայրույթը թափեց Դվինի բնակչության վրա:

Գերիներին եւ ավարը հավաքում էին Դվինում եւ այնուհետեւ մեծ բազմությամբ տանում էին Դամասկոս: Դժվար է ասել, թե ինչն էր պատճառը, որովհետեւ պատմիչներն այդ մասին լռում են, Մուհամմեդ իբն-Օկբան Վալիդի հրամանով ետ կանչվեց, եւ նրա փոխարեն ուղարկվեց Աբդուլ-Ազիզը: Թերեւս պատճառն արաբ ոստիկանի սահման չճանաչող անգթությունն էր եւ երկիրը փաստորեն ամայացնելը, որը մի կողմից, կամա թե ակամա, ծնում էր հակաարաբական շարժում, իսկ մյուս կողմից՝ նվազեցնում երկրի հարկատվական հնարավորությունները: Այսպես թե այնպես, նոր ոստիկանը Հայաստան եկավ շինարարական եւ հաշտարարական հանձնարարականներով: Սա ոստիկան կարգվեց 706 թվականին եւ գալով Հայաստան՝ վերականգնեց Դվինի պարիսպները եւ երկրի խաղաղությունը:

Այս ժամանակներում եղավ Վահան Գողթնացու գերեվարությունը: Գողթնի Խոսրով իշխանը, որ զոհ գնաց Նախճավանի ողջակիզմանը, Վահան անունով որդի ուներ, որը գերիների հետ Դամասկոս քշվեց չորս տարեկան հասակում: Այնտեղ նա իսլամացվեց եւ ստացավ Վահաբ անունը: Ուսման մեջ առաջադիմելով՝ նա արքունիքում դիվանապետ նշանակվեց: Գերիների մեջ էր նաեւ Շուշանիկ Կամսարականը, որը Վարդանակերտի կռվի ժամանակ խնդրել էր գթալ հայ զինվորների ձեռքից ու Երասխի սառույցներից մազապուրծ եղած արաբ ռազմիկներին: Անշուշտ, հայ իշխանուհու կատարած բարերարությունը վաղուց մոռացվել էր, եւ նա էլ քշվել էր Արաբիա: Հայ իշխանուհին Խառան քաղաքում ենթարկվեց հատուկ բռնությունների, խիստ բանտարկության, քաղցի, ծարավի եւ անգամ խոշտանգումների, սակայն նա հրաժարվեց մահմեդականանալ եւ տանջամահ արվեց Խառանի բանտում: Շուշանիկի մահը Մաղաքիա Օրմանյանը դնում է 708 թվին, չնայած բոլոր հիմքերը կան այն թվագրելու 706-ով կամ 707-ով: Երբ նրա մահվան լուրը հասավ եղբորը՝ Գագիկ Կամսարականին, վերջինս Վարդանակերտ ավանում ավարտին էր հասցրել Վարդանակերտի հաղթանակին նվիրված ուխտի եկեղեցու շինարարությունը: Եկեղեցու նավակատիքի հանդեսին նա միացրեց նաեւ իր վկայված քրոջ տոնական հիշատակը: Շուշանիկ Կամսարականը հիշվում է ճառընտիրների մեջ, բայց զարմանալիորեն տեղ չի գտել «Յայսմաւուրք»-ում:

Շարունակությունը՝ էջ 4

Սկիզբը՝ թիվ 22

# ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ԳԻՐ

## Վերարծարծելով հայտնի փաստերը

**Որո՞նք էին այդ դպրությունները:**

Ամենայն հավանականությամբ՝ հունարենն ու ասորերենը, որոնք քրիստոնեության մուտքից հետո Հայաստանում դարձել էին քարոզչության լեզու: Հենց նրանք էլ հեթանոսական այլ արժեքների հետ մեկտեղ թաղել էին հայոց գիրն ու մշակույթը: Կործանվել էին հին աստվածները, հողին էին հավասարվել բագիններն ու մեհյանները, ոչնչացվել էր ամբողջ հեթանոսական մշակույթը: Առաջին քրիստոնյաներն այս հարցում շատ խիստ էին ու անզիջում:

Ագաթանգեղոսը գրում է, որ նրանք առաջինը դպրության Տիր աստծու տաճարը քանդեցին ու ավերեցին. **«Աղա [Տրդատ] թագավորն իսկույն տիրաբար հրաման տվեց, որ ամենքի հավանությամբ գործը երանելի Գրիգորի ձեռքը հանձնելու, որպեսզի նախկին հայրենի, հնամենի եւ նախնիների ու իր կողմից աստված անվանված չաստվածները անհիշատակ դարձնի, մեջտեղից ջնջի: Աղա ինքն իսկ թագավորը, ամբողջ զորքով հանդերձ Վաղարշապատ քաղաքից շարժվեց գնաց Արտաշատ քաղաքը, ավերելու այնտեղ Անահիտ դիցուհու բագինը եւ այն, որ երազամույն կոչված տեղում էր գտնվում: Նախ ճանապարհին հանդիպեցին քրմական դպրության դպիր, Որմիզդի գրչի դիվան կոչված, երազացույց, երազահան պաշտամունքի Տիր աստծու իմաստության ուսման մեհյանը եւ ամենից առաջ սկսեցին այն քանդել, այրել, ավերել»** (Պատմություն Հայոց, 1983, էջ 437): Ուրեմն առաջինը քանդել են հին գրի օջախը:



Ահա այս է եղել իրականությունը, նախամաշտոցյան գիրը դուրս է մղվել գործածությունից, թաղվել ասորական ու հունական դպրությունների կողմից (որոնք եկել էին տարածելու քրիստոնեության գաղափարները) եւ մոռացվել:

Քրիստոնեության մուտքից հարյուր տարի անց, երբ համեմատաբար խաղաղվել էին կրքերը, եւ քրիստոնեությունը դարձել էր ազգային գաղափարախոսության մաս, ահա եւ կարիք զգացվեց ազգային գրի ու այբուբենի: Բայց հինը, որը պահպանվել էր ասորի եպիսկոպոս Դանիելի մոտ, արդեն հնացել էր, խզվել էր կապը, անհրաժեշտ էր այն նորոգել կամ ստեղծել նորը: Պատահական չէ, որ, ըստ մատենագիրների, երբ դանիելյան գրերը հասնում են Սահակին ու Մաշտոցին, նրանք ուրախանում են: Այսինքն՝ վերականգնվում է խզված կապը: Բայց անցյալն արդեն անցյալում էր եւ պետք էր մտածել ապագայի մասին:

Նախամաշտոցյան գրի առկայության օգտին խոսում է նաեւ հետեւյալ իրողությունը: Հայտնի է, որ անմիջապես գրերի գյուտից հետո բարձր թռիչքի հասավ հայ մատենագրությունը, որի հիմքը գրավոր հայերենն էր: Այնքան բարձր էր այդ թռիչքը, որ հետագա բոլոր ժամանակների համար այն մնաց որպես ոսկեդար: Եթե նախկինում մենք չունենայինք մշակված, համակարգված հայոց լեզու, եւ դա ոչ միայն որպես բանավոր, այլեւ գրավոր խոսք, ապա դժվար թե անմիջապես մաշտոցյան գրերից հետո այն հասներ այդպիսի կատարելության: Այդպիսի արագությամբ բանավոր հայերենը չէր կարող դառնալ անթերի ու բարձրարվեստ գրավոր եւ գրական լեզու: Թե ինչ լեզվով էին խոսում արքունիքում, եւ կամ ինչ բարբառ էր բնորոշ ռամիկ խոսքին, դա այլ հարց է, բայց գրականության (ամբողջ մշակույթի) պատմությունը չի կարող անտեսել այդ իրողությունը: Ինչո՞ւ անմիջապես մաշտոցյան գրերի գյուտից հետո ստեղծվեց հայոց գրական ու գրավոր լեզու: Պատասխաններից մեկն էլ, անշուշտ, այն է, որ այդ լեզուն չէր կարող ստեղծվել պարապ տեղը: Այն անպայման ուներ իր հիմքերն անցյալի մեջ: Ուրեմն պետք է լիներ նախամաշտոցյան գիր, որը կանոնակարգեր եւ հունի մեջ դներ ժամանակի գրական հայերենը՝ գրաբարը:

*Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ*
*Գրականագիտության դոկտոր, պրոֆեսոր*




# Ներսես կաթողիկոսի դերը ներքին եւ արտաքին քաղաքական բարդ հարաբերություններում

Հռոմեա-պարսկական հակամարտության սրման պայմաններում, երբ մի կողմից Հռոմը, մյուս կողմից Պարսկաստանը ձգտում էին Հայաստանը ներգրավել իրենց միջեւ ծավալվող պայքարում, քաղաքական լծակներով ճնշման եղանակները երկուստեք սաստկացան: Երբ պարսկական կողմը նենգորեն ձերբակալեց եւ կուրացրեց Տիրան թագավորին, ապա Հռոմում, կայսեր հրամանով, սպանվեց Արշակի եղբայրը՝ արքայազն Տրդատը՝ Գնելի հայրը: Մյուս պատանդների կյանքը նույնպես վտանգված էր: Ինչպես նշում է Մովսես Խորենացին, այդպիսի նենգ սպանությունից հետո հռոմեական զորքն արդեն շարժվեց Հայաստանի վրա: Այդ ժամանակ Արշակ թագավորը հռոմեական զորքին ընդառաջ ուղարկեց Ներսես կաթողիկոսին, եւ հաշտություն կայացվեց:

Ըստ Փավստոս Բուզանդի՝ Հայոց աշխարհի եւ Հունաց կայսեր միջեւ կնքված խաղաղության եւ միաբանության դաշինքի նորոգման առիթով, Հայոց թագավորը Ներսես կաթողիկոսին եւ նրա հետ հայոց մեծամեծներից տասը նախարարների՝ պատշաճ պատրաստությամբ, ուղարկեց Վաղես կայսեր մոտ: Ներսես կաթողիկոսն իր մեկնումից առաջ Խադին ձեռնադրեց Բագրեւանդի եւ Արշարունյաց եպիսկոպոս եւ թողեց իրեն փոխանորդ ու տեղապահ:

Կայսեր միակ զավակն այդ ժամանակ ծանր հիվանդ էր: Սուրբ Ներսեսն աղոթեց նրա համար եւ դիմելով կայսերն՝ ասաց. «Եթե հավատաս, որ Տեր Հիսուս Քրիստոս Աստծո միածին Որդին ու ծնունդն է, Նրա ինքնությունից եւ իսկությունից, Հոր որովայնից ծնունդ եւ ոչ թե արարած, Հորից ծագած... Նրա էության նկարագիրը... որ սկզբից ի վեր նստում էր Հոր աջ կողմը եւ Իր ծնողի աթոռակիցն էր... վեր կացավ աջակողմի աթոռից, փոքրացավ, ամփոփվեց, Կույսից մարմնացավ, մարդացավ, Ինքն Իրեն նվաստացրեց, մարդ դարձավ, Իր կամքով վշտեր կրեց, մեռավ եւ հարություն առավ, բոլորին առհասարակ կյանք պարգեւեց, (երկինք) վերացավ եւ նստեց Իր բնական աթոռը՝ Իր ծնողի՝ Հոր աջ կողմը...

Ընդունիր դու սուրբ հավատի մկրտությունը արարիչ Հոր անունով եւ խոստովանելով Որդու ծնվելը Հորից բոլոր ժամանակներից առաջ, ըստ իր բնական գոյացության... որ եղավ մեր փրկության եւ կենդանության համար ... Եվ որովհետեւ մարդիկ ինքնակամ մտան ծառայության մեջ, ուստի Ինքը ծառայի կերպարանքով տեր դարձավ, որպեսզի մեզ ծառայությունից ազատի: Երբ Աստված սկզբում ստեղծում էր արարածներ, հետո ստեղծեց մարդուն՝ Իր աներեւույթ եւ երեւացող զորություններով ի մի հավաքելով... որին ստեղծեց Իր պատկերի եւ կերպարանքի համաձայն եւ նրան դարձրեց իր կամքի տերը: Սակայն սատանայի նախանձով, խաբեբայական խարդախ բանսարկությամբ (մարդը) փչացավ: Իսկ Տերը եկավ խղճալու կորչողին, ծնվեց Կույսից մարդու կերպարանքով, որպեսզի երկնքում եւ երկրում խաղաղություն հաստատի.... Աստծո մեծությունն ստեղծեց ամեն ինչ եւ մարդուն դարձրեց ամեն ինչի տերը. հրամայեց եւ բազմացան: Ապա իշխաններ նշանակեց եւ առաջնորդներ կարգեց: Իսկ երբ մի անգամ պատվիրանազանց եղան, իշխանությունից զրկվեցին, որ ստացել եւ առաջուց ունեին ու երկրորդ անգամ միայն կարիքների համար թույլ տվեց ոմանց իշխել, ոմանց չիշխել, որպեսզի գոնե հետո իշխելով ճանաչենք շնորհը եւ չիշխելով Ամենաշիրոջ իշխանությունը գիտակցենք: Իսկ ո՞վ է, որ չի ձգտում մեծության, մարմնի առողջության եւ կամ կարիք չզգա կամակատարության, որ վայել է միայն Աստծո Միածին Որդուն... Իսկ որոնց վրա արդար Արեգակը սփռում է Իր հավատի լույսը եւ գրում խավարի, տգիտության սեւ մառախուղը, նրանք մշտապես անարգում են սուտն ու մոլորությունը՝ նախ իրենց գործերով ու բարի օրինակով եւ ապա ուրիշներին նույնը սովորեցնելով, նախ չկասկածելով արարչության զորության Երրորդության հավատին, ապա սրբությամբ, զգաստությամբ եւ պարկեշտությամբ իրենց աշխարհիկ բաներից զերծ պահելով, ապրում են լրիվ հանգստությամբ մեր Արարիչ Աստծու Որդի Քրիստոսի կամքով եւ, արհամարհելով, ոտնատակ են տալիս բոլոր անցավոր բաները եւ Սուրբ Հոգու թեւերով բարձրասլաց թռչում են, անցնում խաժամուժ խմբերի վրայով, որոնք այս աշխարհում, մեր օրերում խանգարիչներ են...»: Այս եւ ուրիշ նման այլ խոսքերով Հայոց Հայրապետը հորդորեց կայսերը հավատքի գալ, տվեց ժամանակ, ապա վկայեց, որ եթե նա մինչ նշված ժամկետը դարձի չգա, որդին կմահանա: Սակայն կայսրը չանսաց սրբի հորդորներին եւ կորցրեց միակ որդուն: Զայրացած եւ վշտից կուրացած միապետը հրաման տվեց երանելի Ներսեսին աքսորել, գցել մեծ ծովի անապատ կղզիներից մեկը, որպեսզի սովից մեռնի: Ապա հրամայեց բոլոր ուղղափառ հոգեւորականներին եւ պահանջեց արիանոսականություն ընդունել: Երբ նրանք հրաժարվեցին, բոլորին աքսորեց ու քշեց օտար երկրներ: Դրանից հետո երկրում մեծամեծ նեղություններ, փորձություններ ու բազում վտանգներ ծագեցին, ավելին, քան երբեւէ եղել էին իր նախորդների ժամանակ:

Իսկ կղզում Ներսեսը մխիթարում էր բոլորին ու քաջալերում, որ հաստատ մնան իրենց հավատքի մեջ՝ բազում փաստերով ու օրինակներով վկայելով Տիրոջ զորության մասին: Ամենն ասելուց հետո նա կոչ արեց. «Բոլորդ ծունր դրեք, որ արժանանաք Քրիստոսի մարդասիրության»: Աղոթքից հետո ծովում հանկարծ ցամաք հող բարձրացավ, եւ մեծ քանակությամբ ձկներ թափվեցին կղզում: Հավաքված փայտերն իրենց-իրենց վառվեցին, սրբի փորած փոսից անուշ աղբյուր բխեց: Կղզու բնակիչներն այսպես Տիրոջ զորությամբ ինը տարի՝ մինչեւ կայսեր մահը, ապրեցին այստեղ:

*Շարունակությունը՝ էջ 7*

# Մատթեոսի Ավետարանի մեկնություն

## Ուիլիամ Բարկլիի «Ամենօրյա ուսուցման Աստվածաշունչ» գրքի մեկնության հիման վրա

*Սկիզբը՝ էջ 5*

Վիլիամ Լոկեի նովելներից մեկում ներկայացվում է մի հետաքրքրական պատմություն, համաձայն որի՝ մի կին, որ ուներ նյութական հսկա կարողություն եւ կյանքի կեսն անցկացրել էր աշխարհի զանազան պատկերասրահներ ու տեսարժան վայրեր շրջագայելով, այդ ամենից հոգնած ու ձանձրացած, հանդիպում է մի ֆրանսիացու՝ նյութական սուղ միջոցներով, բայց լայն գիտելիքներով եւ գեղեցկության հանդեպ մեծագույն սիրով լեցուն: Վայելելով նրա ընկերակցությունը եւ հաղորդ դառնալով նրա գաղափարներին ու պատկերացումներին՝ կինը կյանքի ու աշխարհի այլ՝ միանգամայն տարբեր պատկերի առջեւ է հայտնվում: «Ես երբեք չկարողացա հասկանալ ու ընկալել, թե ինչպիսի՛ն են իրերը,- ասում է կինը նրան,- մինչեւ որ Դուք չսովորեցրիք ինձ, թե ինչպե՛ս նայել դրանց»:

Կյանքը բավական տարբեր է, երբ Հիսուս է ուսուցանում մեզ, թե ինչպե՛ս նայել իրերին: Երբ Հիսուս մուտք է գործում մեր սրտերը, Նա բացում է մեր աչքերը՝ տեսնելու իրերը ճշմարտորեն եւ իրենց ամբողջականության մեջ:

### Արարչագործություն եւ վերաարարչագործություն

գ) Հին Կտակարանը հատուկ կերպով Սբ. Հոգին առնչում է արարչագործության հետ: Աստված Իր Հոգու միջոցով է իրականացրել տիեզերքի ստեղծումը: Ի սկզբանե Աստծո Հոգին շարժվում է ջրերի վրայով, եւ քաոսը վերածվում է կարգավորված աշխարհի (տե՛ս Ծնունդ Ա 2): «Տիրոջ խոսքով ստեղծվեց երկինքը,- ասում է սաղմոսերգուն,- եւ իր բերանի շնչով (գրաբար բնագրում՝ հոգւով բերանոյ նորա)՝ նրա բոլոր զորությունները» (Սաղմ. ԼԲ 6): (Հոգի բառը ե՛ւ եբրայերենում՝ ruach, ե՛ւ հունարենում՝ pneuma, ե՛ւ դասական հայերենում՝ հոգի կամ ոգի, արտահայտում է երկու իմաստ՝ հոգի եւ շունչ): «Ուղարկում ես քո շունչը (գրաբար բնագրում՝ հոգի քո ) եւ ստեղծում նրանց» (Սաղմ. ՃԴ 30): «Աստվածային հոգին է, որ ստեղծել է ինձ, եւ Ամենակալի շունչն է, որ ուսուցանում է ինձ» (Հոբ ԼԳ 4):

Հոգին աշխարհի Արարիչն ու Կենդանարարն է: Այսպիսով, Հիսուսով աշխարհ է գալիս Աստծո կենսատու եւ արարիչ ուժը: Այդ ուժը, որ սկզբնական քաոսը վերածել էր կարգավորյալ աշխարհի, գալիս է մեր քաոսային կյանքը կարգավորելու: Այդ ուժը, որ կենդանություն էր ներարկել այնտեղ, որտեղ կյանքի նշույլ չկար, գալիս է մեր տկարությանն ու թմրածությանը կյանք ու կենդանություն հաղորդելու: Մենք կենդանություն չենք ունենա այնքան ժամանակ, մինչեւ որ Հիսուս մուտք չգործի եւ Իր ներկայությունը չհաստատի մեր կյանքում:

դ) Հին Կտակարանը հատուկ կերպով Սբ. Հոգին առնչում է ոչ միայն արարչագործությանը, այլեւ վերաարարչագործությանը: Եզեկիել մարգարեն մեզ ներկայացնում է մարդկային չորացած ոսկորներով լի հարթավայրի մի սարսափազդու պատկեր: Նա շարունակում է պատմել, թե ինչպե՛ս են այդ ոսկորները կենդանանում, եւ ապա լսվում է Տիրոջ ձայնը. «Իմ հոգին տալու եմ ձեզ, եւ դուք կենդանանալու եք» (տե՛ս Եզեկ. ԼԷ 1-14): Ռաբբիների մի ասույթի համաձայն՝ Աստված ասել է Իսրայելին. «Այս աշխարհում Իմ Հոգին իմաստություն է դրել ձեր մեջ, բայց գալիք ժամանակներում Իմ Հոգին վերստին ձեզ կենդանացնելու է»: Երբ մարդիկ թաղվում են մեղքի ու թմբիրի մեջ, Աստծո Հոգին է, որ կրկին կարող է նրանց կյանք ու արթնություն տալ:

Այսպես, Հիսուսով աշխարհ է մտնում այն ուժը, որ կարող է վերստեղծել կյանքը, կենդանացնել մեղքի մեջ մեռած մարդկային հոգին, վերահաստատել իդեալները, զորեղացնել կամքը բարության հանդեպ: Նա կարող է վերանորոգել մեղքի հետեւանքով կորուսյալ ու անկյալ կյանքը:

Այս հատվածի բուն իմաստն ու հայտնությունն այն է, որ Հիսուս Քրիստոսի ծննդյան մեջ Աստծո Հոգին ունի կատարյալ գործուն դերակատարություն: Հոգին է, որ Աստծո ճշմարտությունը ոչ միայն հաղորդում է մարդկանց, այլեւ հնարավորություն տալիս նրանց հասկանալու այդ ճշմարտությունը, Հոգին է, որ ոչ միայն ստեղծել է աշխարհը, այլեւ կարող է վերստեղծել մարդկային ներաշխարհը՝ հոգին:

Հիսուս էլ ոչ միայն հայտնում է մեզ, թե Ո՛վ է Աստված, եւ ինչպե՛ս պետք է լինի մարդը, այլեւ բացում է մեր մտքի աչքերը՝ հասկանալու Աստծո՝ մեզ հայտնված ճշմարտությունը: Նա ոչ միայն արարչական, այլեւ վերաարարչական ուժ է, որ կարող է մեղքից ու մահից ազատագրել մարդկային հոգիները:

*Վաչիկ սրկ. ՋԱՐԳԱՐՅԱՆ*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ՝ ուսուցիչներին



Վերջին տարիների դարձն առ Աստված եւ եկեղեցի բնականոն է ու կարեւոր մեր հասարակության հոգեմտավոր ու բարոյական զարգացման համար: Հուսադրող եւ հաճելի է նկատել, որ շատեր արդեն եկեղեցի են մտնում ոչ միայն սովորույթի համաձայն մոմ վառելու, այլեւ խաղաղվելու, աղոթելու, հոգեպես զորանալու համար: Սովորեցին «Հայր մեր»-ն ու «Հավատամք»-ը, մեզ շատ սրտամոտ շարականներն ու տաղերը, եկեղեցական կարգուկանոնն ու վարվելակարգը: Ստեղծվեց հոգեւորականի եւ հավատացյալների միջեւ կապ: Նման փոխհարաբերությունն է դարեր շարունակ հոգեւոր անվտանգության մեջ պահել հայ ժողովրդին եւ կանգուն՝ Հայ Առաքելական եկեղեցին:

Սակայն աստվածճանաչողությունը սկսվում է նախ եւ առաջ գրքից, որ ըստ հեղինակների, գրված է Աստծո ներշնչանքով: Աստվածաշնչի ընթերցանությունը նման է Աստծո հետ զրույցի, որ գիտելիք ու դրական լիցքեր հաղորդելուց զատ, իմաստնացնում է, նույնիսկ բուժում հոգեւոր վերքերը:

Թերեւս այս իրողությունները կարեւորվեցին հեռավոր 1710 թվականին, երբ Գերմանիայում ստեղծվեց առաջին Աստվածաշնչային ընկերությունը: Այս ընկերության հիմնադիր մի դուքս որոշել էր իր գավառի ժողովրդին մատչելի գներով Աստվածաշունչ բաժանել: Կամավոր ու աստվածահաճո այս գործը հետագայում ընդօրինակվեց աշխարհի մի շարք երկրներում՝ եկեղեցիների համագործակցությամբ: Այսօր արդեն աշխարհի երկու հարյուր երկրներում գործում է հարյուրից ավելի Աստվածաշնչային ընկերություն եւ մոտ երեսուն գրասենյակ: Այս կառույցները բացի Աստվածաշունչ բաժանելուց՝ հրատարակում են տարբեր սուրբգրային թարգմանություններ ու օժանդակ գրականություն եւ տարածում դրանք:

1991 թվականին Աստվածաշնչային միջազգային ընկերության մասնաճյուղ հիմնվեց նաեւ Երեւանում: Ընկերության Հոգաբարձուների խորհրդի անդամ են Հայ Առաքելական, Ավետարանական եւ Կաթոլիկե եկեղեցիների ներկայացուցիչները: Հոգաբարձուների խորհրդի պատվավոր նախագահն է Տ. Եզնիկ եպիսկ. Պետրոսյանը: Հայաստանի Աստվածաշնչային ընկերությունը տարբեր դրամաշնորհների միջոցով ստեղծել է բավական հարուստ մի գրադարան՝ հատուկ ուշադրություն դարձնելով նաեւ մանկական աստվածաշնչային գրականության ստեղծմանը: Հրատարակված է պատկերազարդ ու աննախադեպ որակի մի գրականություն, որ յուրաքանչյուր երեխա սիրով բացի ու ընթերցի:

Հայաստանի Աստվածաշնչային ընկերության կազմակերպած ու իրականացվող ծրագրերից մեկին հանդիսատես եղանք վերջերս: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հավաքվել էին Արմավիրի թեմի դպրոցների տնօրենները: Աստվածաշնչային ընկերությունը ոչ միայն նրանց, այլեւ Հայաստանի բոլոր թեմերում իրականացնում է «Աստվածաշունչ՝ դպրոցներին» ծրագիրը, որի շրջանակներում Հայաստանի բոլոր դպրոցների գրադարաններում այսուհետ կլինեն Աստվածաշունչ եւ օժանդակ գրականություն: Արդեն չորրորդ տարին իրականացվող այս ծրագիրն անցյալ տարի ֆինանսավորել է եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան Կլոր սեղանը, իսկ այս տարի՝ Զինիշյան հիմնադրամը: Հայաստանի Աստվածաշնչային ընկերության աշխատակից Արշավիր Գաբուջյանը, գրականությունը դպրոցի տնօրեններին հանձնելուց առաջ, երախտիքի խոսքեր հղեց բոլոր նրանց, ովքեր աջակցեցին ծրագրի նախորդ եւ ներկա փուլերի իրականացմանը: Նա հատկապես շնորհակալություն հայտնեց Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն եպիսկ. Ադամյանին, որն ավելի կազմակերպչի, քան ստացողի դերում եղավ:

*Սուսաննա ՄԱՐԳԱՐՅԱՆ*

